

Թիւն Զուղայեցի վաճառականաց Ստեփան Մովսիսեան Բամազվցոյն եւ Գրիգոր Մտաթէոսեան Կուսիկեանին, վասն բերելոյ զմեռաքա Պարսկաստանէ առանց հատուցանելոյ զմաքս եւ վաճառելոյ ի Ռուսաստանի ուր ուրեք եւ կամիցին, իսկ եթէ չվաճառեսցի՝ ունիցին իրաւունս տանելոյ յայլ Տէրութիւնս եւրոպացոց զկնի հատուցանելոյ զմաքսն: Զկնի ամի միոյ յաւելու յընկերութիւն նոցա Անգլիացի Թօմաս Բրէյն անուն ամն, որ եւ ունեցեալ է ի նոցանէ զլրակատար զիր վէճելութեան, որպէսզի շարունակեսցէ նա զտուտուրս իւր ընդ անուամբ ընկերութեանն Հայոց, որում եւ տուեալ եղեւ ի զանազան ժամանակս մեծամեծ արտօնութիւնս առեւարական:»3)

Մեծարժէք են նաեւ Հոլանտացի John Struys ուղեգրին տեղեկութիւնները: 1669-ին Աստրախանի մասին ան կը գրէ.

«Նշանաւոր քաղաք մըն է անցուդարձի, յաճախուած ոչ միայն Կասպից ծովու Թաթարաց երկիրներէն, այլ նաեւ պարսիկներէ, հայերէ եւ հնդկիկներէ, որոնք իրենց ապրանքները հոս կը բերեն տեսակ մը նաւով boese կոչուած, իւրաքանչիւրը 80 թըն բեռի տարողութեամբ: Բայց այս նաւերը չեն կրնար հակառակ ուղղութեամբ ճամբորդել, այլ միայն հովին ուղղութեամբ: Բազմաթիւ տեսակ ապրանքներու մէջէն, որոնցմով առեւտուր կ'ընեն Աստրախանի մէջ, մետաքսը ամենազըլխաւորն է: Այնպէս որ, միակ մթերանոցը կ'երեւայ այդ ապրանքին, ուրկէ վերստին կ'արտածուի Վոլկայի վերով, եւ հետզհետէ բոլոր Ռուսական կայսրութեան մէջէն»:4)

Ասկէ էր որ անշուշտ ապրանքը կը տարուէր մինչեւ Հոլանտա, Անգլիա կամ Եւրոպայի ուրիշ մասերը:

Այս Հոլանտացիին կը պատրիւնք ապրանքներու փոխադրութեան կերպերու մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ ուրիշ կարեւոր ծանօթութիւններ: Ան կը հաւաստէ, թէ հայերը քաջ ծանօթ են Կասպից ծովուն եւ չըջա-

կայ երկիրներուն, թէ հայ նաւազնացներ, «որոնք լաւ ծանօթ են այս կողմերուն»5) օգնած են իրեն կողմելու Կասպից ծովու իր պատրաստած աշխարհադրական տախտակը: Կը յիշէ նաեւ, որ քաղաքները իրենց կողոպտած մետաքսը Աստրախանի մէջ «ծախեցին ընթացիկ զինին մէկ երրորդովը, որ դնուեցաւ պարսիկ եւ հայ վաճառականներէ»:6)

Պարսիկներն ալ թերեւս հայեր ըլլային, այսինքն՝ Պարսկահայեր կամ Զուղայեցիներ, քանի որ ծանօթ էր Պարսից դժկամակութիւնը առեւտուրով կամ այլ պատճառաւ Պարսկաստանէն հեռանալու:

John Struys-ի ամենէն կարեւոր վկայութիւնը հետեւեալն է: Երբ ինք գերի էր մահմետականի մը մօտ, անկէ ազատութիւն կը խնդրէ Հոլանտա երթալու: Կ'ուզէ անկէ Կովկասեան ու Կասպեան երկիրներու յարմար ապրանքներ առնել, որ ետ դայ: Այդպիսով ան կը յուսար առեւտուրով զբաղիլ: Մեծմետական տէրը այս առաջարկի մասին կը խօսի հայերու: «Հայերը, որոնք մետաքսի առեւտուրով կը զբաղէին, փափաքեցան զիս տեսնել: Իմ տէրս օր մը նշանակեց, եւ իրեն հետ գացինք հայ վաճառականներուն տեղը, ուր անոնցմէ ամենէն երեւելիներէն մէկը հարցուց ինձ թէ՛ արդեօք Իտալերէն կը խօսի՞մ, թէ՛ Ամսդերտամցի՞ եմ, թէ՛ այնինչ վաճառականը կը ճանչնայի՞ հոն: Ես պատասխանեցի Իտալերէն որ Ամսդերտամցի եմ բայց իր անուանած անձնաւորութիւնը չեմ ճանչնար, մինչ ծանօթ էի քանի մը հատի հետ, որոնք մետաքսի առեւտուրով կը զբաղէին:

5) Անդ՝ էջ 224:

6) Անդ՝ էջ 186: Գոնի քաղաքները 1669-ին Ստենկա Ռուդինի առաջնորդութեամբ ապրատամբեցան Ռուսաց դէմ: 1671-ին, այդ ապրատամբութեան ճնշումէն վերջ, Ռուսիոյ առեւտուրին «մեծ մասը, զրեթէ ամբողջութեամբ, ինկաւ հայ վաճառականներու ձեռքը, որոնք Աստրախան հաստատուած էին: Անոնք թէ՛ Ռուսիոյ եւ թէ՛ Պարսկաստանի մէջ զործատուներ հաստատեցին»: (Travels—... William Cox, London, 1784, Vol. II, p. 225):

3) Պատ. նոր Զուղայու, էջ 165:

4) The Voyages and Travels of J. S.—London, 1684, p. 177: